

Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՒ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՐԿՆԱԿԻ
ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Նիդերլանդների Թագավորությունը, ղեկավարվելով երկու Պայմանավորվող Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու մտադրությամբ և երկու Պետությունների միջև եկամուտների ու գույքի կրկնակի հարկումը բացառելու, հարկումից խուսափելը կանխելու և հարկային խտրականություն թույլ չտալու նպատակով, որոշեցին կնքել սույն Կոնվենցիան և պայմանավորվեցին հետևյալի մասին.

Գ Լ ՈՒ Խ 1

Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա Յ Ի Կ Ի Ր Ա Ռ Մ Ա Ն Ո Լ Ո Ր Տ Ը

Հոդված 1

ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

ՀԱՐԿԵՐ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների

կողմից սահմանած եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը՝ ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելաճի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի նկատմամբ հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես՝

ա) Հայաստանում.

- i) շահութահարկ,
- ii) եկամտահարկ,
- iii) գույքահարկ,
- iv) հողի հարկ,
(այսուհետև՝ «հայկական հարկ»),

բ) Նիդերլանդներում.

- i) եկամտահարկ (*de inkomstenbelasting*),
- ii) աշխատավարձի հարկ (*de loonbelasting*),
- iii) շահութահարկ (*de vennootschapsbelasting*),

ներառյալ 1967թ. հետո հաստատված կոնցեսիաների նկատմամբ 1810 թ. հանքային օրենքի (*Mijnwet 1810*) դրույթների համաձայն սահմանված կառավարության փայաբաժինը՝ բնական պաշարների արդյունահանման գուտ շահույթի մեջ, կամ 1965 թ. Նիդերլանդների ցամաքային սանդղավանդի հանքային օրենքի (*Mijnwet Continental Plat 1965*) համաձայն,

- iv) շահաբաժինների հարկ (*de dividendbelasting*),
- v) գույքահարկ (*de vermogensbelasting*),
(այսուհետև՝ «նիդերլանդական հարկ»):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև նույնական կամ ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները

կծանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում
կատարված էական փոփոխությունների մասին:

Գ Լ ՈՒ Խ 2

Ս Ա Հ Մ Ա Ն ՈՒ Մ Ն Ե Ր

Հոդված 3

Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒՐ Ս Ա Հ Մ Ա Ն ՈՒ Մ Ն Ե Ր

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի
պահանջում.

ա) «Պայմանավորվող Պետություն» կամ «մյուս Պայմանավորվող
Պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են՝
Հայաստանի Հանրապետություն (Հայաստան) կամ Նիդերլանդների
Թագավորություն (Նիդերլանդներ): «Պայմանավորվող Պետություններ»
տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն (Հայաստան) և
Նիդերլանդների Թագավորություն (Նիդերլանդներ),

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետությունը և
աշխարհագրական իմաստով օգտագործելիս նշանակում է՝ Հայաստանի
Հանրապետության տարածքը, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ
տարածվում են Հայաստանի Հանրապետության իրավասությունը և ինքնիշխան
իրավունքները՝ միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության
համաձայն,

գ) «Նիդերլանդներ» տերմինը նշանակում է՝ Եվրոպայում գտնվող
Նիդերլանդների Թագավորության մասը (ներառյալ նրա տարածքային ծովը) և
այդ տարածքային ծովից դուրս ցանկացած գոտի, որոնց նկատմամբ, ըստ
միջազգային իրավունքի, Նիդերլանդներն ունեն ծովի հատակի և նրա ստորին
շերտի բնական պաշարների և այնտեղից բխող ջրերի հետախուզման և
շահագործման նկատմամբ ինքնիշխան իրավունք և իրավասություն,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց
ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող Պետությունում փաստացի ղեկավարման վայր ունեցող ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում են բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող վայրերի միջև,

ը) «քաղաքացի» տերմինը նշանակում է.

1. Պայմանավորվող Պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

2. Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա իր կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ կամ կազմակերպություն,

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

1. Հայաստանում՝ ֆինանսների նախարարը և պետական եկամուտների նախարարը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները,

2. Նիդերլանդներում՝ ֆինանսների նախարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը:

2. Պայմանավորվող Պետության կողմից սույն Կոնվենցիայի կիրառման ընթացքում դրա որևէ տերմին, որի սահմանումը տրված չէ, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ Պետության օրենքով տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան:

Հոդված 4

ՌԵՁԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենքների համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, պաշտոնական բնակության, ղեկավարման վայրի, ամբողջականացման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա իր տրամադրության տակ ունի մշտական բնակավայր: Եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական բնակավայր, ապա նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական բնակավայր, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում կամ նրանցից և ոչ մեկում չի բնակվում, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է հանդիսանում,

դ) եթե նա երկու Պետությունների քաղաքացին է հանդիսանում կամ և ոչ մեկինը չէ, Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից բացի այլ անձը գրանցված է որպես այդպիսին երկու Պայմանավորվող Պետություններում, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է

նրա փաստացի ղեկավարման վայրը: Եթե կասկած կա ֆիզիկական անձից բացի այլ անձի փաստացի ղեկավարման վայրի գտնվելու կապակցությամբ, ապա իրավասու մարմինները պետք է փորձեն համաձայնեցնել այդպիսի անձի փաստացի ղեկավարման վայրի գտնվելու վայրը: Բայց եթե իրավասու մարմինները ի վիճակի չեն հասնելու համաձայնության, ապա անձը չի համարվի ոչ մի 'Պետության ռեզիդենտ' սույն Կոնվենցիայից օգուտ ստանալու նպատակներով:

Հոդված 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը, հատկապես, ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) մասնաճյուղ,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արհեստանոց, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման կամ շահագործման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ դրանց տեղությունը գերազանցում է տասներկու ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով,

ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործեն իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը, վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի դարձնում մյուս ընկերության մշտական հաստատություն:

Գ Լ ՈՒ Խ 3

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄ

Հոդված 6

ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող Պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, օտարի անշարժ գույքի օգտագործման իրավունքը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների մշակման կամ մշակման իրավունքի համար փոխհատուցման կարգով փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Ծովային, գետային նավերը և օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության հաստատուն վայրի պահպանումը ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության հաստատուն վայրի պահպանումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության հաստատուն վայրի պահպանումը բացառապես «ա»-ից «ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության հաստատուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 6-րդ կետը) բացի այլ անձը գործում է Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող Պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում՝ ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե միայն այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության հաստատուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն, այդ գործունեության հաստատուն վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Ձեռնարկությունը չի համարվի մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող Պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, սովորական կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կկիրառվեն նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՇԱՀՈՒՅԹ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որը նա կարող էր ստանալ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության նպատակների համար կրած ծախսերը, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ նրանից՝ այդ ծախսերը կրել է այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ տեղ:

Սակայն չի թույլատրվի նվազեցնել այն գումարները, եթե այդպիսիք կան, որոնք մշտական հաստատության կողմից վճարված են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիների, հոնորարների կամ համանման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության ղեպքի, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվի մշտական հաստատությանը վճարված գումարները (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության գլխավոր գրասենյակի կամ նրա այլ գրասենյակների կողմից՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիների, հոնորարների կամ համանման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության ղեպքի, կազմակերպության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

4. Որքանով Պայմանավորվող Պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելի այդ Պայմանավորվող Պետությանը հաշվառել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակի միջոցով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե չկա այն փոխելու համար հիմնավոր և բավարար պատճառ:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձինն նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

1. Միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից առաջացած շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման վայրը:

2. Եթե ծովային փոխադրող ձեռնարկության փաստացի կառավարման վայրը գտնվում է նավի վրա, ապա նա համարվում է գտնվող այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է նավի գրանցման նավահանգիստը, կամ, եթե այդպիսի նավահանգիստ չկա, այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում նավը շահագործողը:

3. Սույն հոդվածի նպատակներով միջազգային փոխադրումներում նավերի և օդանավերի շահագործումից ստացված շահույթը ներառում է.

ա) միջազգային փոխադրումներում օգտագործվող նավերի և օդանավերի «անշունչ» (առանց անձնակազմի) սկզբունքով վարձակալության տալուց ստացված շահույթը, և

բ) ապրանքների կամ արտադրանքի փոխադրման համար օգտագործվող բեռնարկղերը (ներառյալ այդպիսի բեռնարկղերի փոխադրմանը վերաբերող սարքավորումները) օգտագործման, պահպանման կամ վարձակալության տալուց ստացված շահույթը,

երբ, հանգամանքներից կախված, այդպիսի վարձակալությունից կամ օգտագործման, պահպանման կամ վարձակալության տալուց ստացված շահույթը բնորոշ չէ միջազգային փոխադրումներում նավերի և օդանավերի շահագործումից ստացված շահույթին:

4. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

ՋՈՒԳՈՐԴՎԱԾ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ՝

ա) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրական կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ զանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի այլ դրույթները, իսկ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն: Բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր հանդիսանում է ընկերությունը (ընկերակցությունից տարբեր), որը ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները 2-րդ կետի կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

4. 2-րդ կետի դրույթները չեն ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

5. «Շահաբաժիններ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից, «օգտագործման» բաժնետոմսերից կամ «օգտագործման» իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ այլ պարտապահանջ չհանդիսացող շահույթին մասնակցելու իրավունք տվող իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենսդրության, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

6. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս

Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

7. Երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունում, այդ մյուս Պետությունը չի կարող սահմանել որևէ հարկ ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, գործնականորեն կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից:

Հոդված 11

ՏՈՎՈՄՆԵՐ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի

տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը, եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ 1-ին կետում նշված ցանկացած տոկոս կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում ստացողը, եթե այդպիսի ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, և եթե կատարվում է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

ա) այդպիսի ստացողը Պայմանավորվող Պետությունն է, նրա վարչատարածքային ստորաբաժանումներից մեկը կամ տեղական իշխանությունները կամ կանոնադիր մարմինը, ներառյալ տվյալ Պետության կենտրոնական բանկը, կամ նման տոկոսները վճարվում են Պայմանավորվող Պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանումներից մեկի կամ տեղական իշխանությունների կամ կանոնադիր մարմինների կողմից,

բ) նման տոկոսները վճարվում են որևէ պարտավորության կամ փոխառության կապակցությամբ, որը երաշխավորվում, ապահովվում կամ աջակցվում է Պայմանավորվող Պետության կողմից կամ այլ անձի կողմից, որը գործում է Պայմանավորվող Պետության անունից,

գ) նման տոկոսները վճարվում են որևէ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների ապառիկ գնման կապակցությամբ կամ մի ձեռնարկության կողմից մյուս ձեռնարկությանը ցանկացած ապրանքի կամ ծառայության ապառիկ մատակարարման կապակցությամբ, կամ

դ) նման տոկոսները վճարվում են որևէ բանկի կողմից երաշխավորված ցանկացած տեսակի փոխառության դիմաց:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները սույն հոդվածի 2-րդ կետի կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

5. «Տոկոսներ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Սույն Կոնվենցիայի նպատակով ժամկետանց վճարման պատճառով կիրառվող տույժերը որպես տոկոսներ չեն դիտարկվում:

6. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

7. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, այդ Պետության քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանությունը կամ ռեզիդենտը: Սակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է տոկոսների վճարման պարտավորությունը, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

8. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներից համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համապատասխան, սակայն այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը, եթե ստացողը ռոյալթիի փաստացի սեփականատերն է:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները սույն հոդվածի 2-րդ կետի կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

4. «Ռոյալթի» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում՝ գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների և ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ձայներիցների կամ ֆիլմերի, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի, ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ռոյալթին, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

6. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքը այդ Պետությունն է, այդ Պետության քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ ռեզիդենտը: Սակայն երբ ռոյալթին վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՐ

1. 6-րդ հոդվածում (Եկամտտ անշարժ գույքից) նշված և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացած արժեքի հավելածը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով

Պայմանավորվող Պետությունում իր գործունեությունը իրականացնելու համար իր տրամադրության տակ չունի կանոնավոր կերպով հասանելի հաստատուն բազա: Եթե նա ունի այդպիսի հաստատուն բազա, ապա այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ հաստատուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

Հոդված 15

ԿԱԽՅԱԼ ԱՆՉՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16-րդ (Տնօրենների հոնորարներ), 18-րդ (Կենսաթոշակներ, տարեկան ռենտաներ և սոցիալական ապահովագրության վճարներ), 19-րդ (Պետական ծառայություն) և 20-րդ (Պրոֆեսորներ և ուսուցիչներ) հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված ռոճիկը, աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարում գտնվում է մյուս Պետությունում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա

Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման վայրը: Սույն կետի նպատակներով կկիրառվեն 8-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները (Ծովային և օդային փոխադրում):

4. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը:

5. 4-րդ կետի դրույթները չեն ազդում Պայմանավորվող Պետությունների իրավունքների վրա հարկ գանձելու (իր սեփական օրենսդրությանը համաձայն) ընկերության (որի գույքը ամբողջությամբ կամ մասամբ բաժանված է փայամասերի, և որը այդ Պետության օրենսդրությամբ հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտը) բաժնետոմսերի կամ «օգտագործման» իրավունքի օտարումից առաջացած արժեքի հավելաճի վրա, որը ստացվել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի կողմից, որը հանդիսացել է առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտը այդպիսի բաժնետոմսերի կամ «օգտագործման» իրավունքի օտարմանը նախորդող վերջին 5 տարիների ընթացքում:

Հոդված 14

ԱՆԿԱԽ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա մյուս

ժամկետում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի կամ օդանավի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 16

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնարարները և այլ համանման վճարումները՝ կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17

ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 14-րդ (Անկախ անձնական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին՝ մյուս Պայմանավորվող Պետությունում իր իրականացրած անձնական գործունեությունից որպես արվեստի գործիչ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը (ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործիչ կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից), 14-րդ (Անկախ անձնական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն

Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ 1-ին կետում հիշատակված գործունեությունից արվեստի գործչի կամ մարզիկի ստացած եկամուտը ազատվում է հարկումից այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է այդպիսի գործունեությունը, եթե այն իրականացվում է Պայմանավորվող Պետությունների կառավարությունների միջև մարզական կամ մշակութային փոխանակման շրջանակներում և չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ:

Հոդված 18

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, ՏԱՐԵԿԱՆ ՌԵՆՏԱ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Հաշվի առնելով 19-րդ հոդվածի (Պետական ծառայություն) 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի առնչությամբ վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները, ինչպես նաև տարեկան ռենտան ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Սակայն երբ այդպիսի վարձատրությունները պարբերական բնույթ չեն կրում և վճարվում են մյուս Պայմանավորվող Պետությունում նախկին վարձու աշխատանքի առնչությամբ, կամ տարեկան ռենտայի իրավունքի փոխարեն իրականացվում է միանվագ վճարում, ապա այդպիսի վարձատրությունը կամ այդպիսի միանվագ գումարը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում է:

3. Ցանկացած կենսաթոշակ և այլ վճարում, որը վճարվում է Պայմանավորվող Պետության սոցիալական ապահովագրության համակարգի շրջանակներում մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին, կարող է հարկվել առաջինը հիշատակված Պետությունում:

4. «Տարեկան ռենտա» տերմինը նշանակում է՝ հաստատուն գումար, որը սահմանված ամսաթվերին պարբերաբար վճարվում է ամբողջ կյանքի ընթացքում կամ որոշված և հաստատված ժամանակահատվածում որպես դրամական կամ

դրամական փոխարժեքին համարժեք և լիակատար վերադարձելի վճարում կատարելու պարտավորություն:

Հոդված 19

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող վարձատրությունները կարող են հարկվել այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

1. հանդիսանում է այդ Պետության քաղաքացի, կամ

2. չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարված որևէ կենսաթոշակ կարող է հարկվել այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ), 16-րդ (Տնօրենների հոնորարներ), և 18-րդ (Կենսաթոշակներ, տարեկան ռենտա և սոցիալական ապահովագրության վճարներ) հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ

տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 20

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ ԵՒ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող պրոֆեսորի կամ դասատուի՝ երկու տարին չգերազանցող ժամանակահատվածում մյուս Պայմանավորվող Պետությունում այդ Պետության կողմից հավատարմագրված համալսարանում, քոլեջում կամ այլ համանման բարձրագույն կրթական կամ հետազոտական հաստատությունում հետազոտության կամ ուսուցման իրականացման համար ստացված վարձատրությունները ենթակա են հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում:

2. Սույն հոդվածը չի կիրառվում հետազոտությունից ստացվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունը իրականացվում է ոչ թե հասարակական, այլ առավելապես մեկ կամ ավելի անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 21

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող Պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների մասով, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հողված 22

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի (Եկամուտ անշարժ գույքից) 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, գործնականորեն կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

Գ Լ ՈՒ Խ 4

ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Հողված 23

ԳՈՒՅՔ

1. 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող

(Այլ եկամուտներ) 2-րդ կետի համապատասխան կարող են հարկվել Հայաստանում այն չափով, որքանով այդ տարրերը ներառված են 1-ին կետում հիշատակված բազայի մեջ, եթե Նիդերլանդները, կրկնակի հարկումը բացառելու համար, Նիդերլանդների ներքին օրենսդրության շրջանակներում թույլատրեն նիդերլանդական հարկից այդպիսի եկամտի տարրերի նկատմամբ այլ երկրում գանձվող հարկի նվազեցում: Համապատասխանաբար, այդ նվազեցման հաշվարկման համար կկիրառվեն սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները:

5. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) այն դեպքում, երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Նիդերլանդներում, ապա Հայաստանը թույլատրում է.

i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում Նիդերլանդներում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում Նիդերլանդներում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել Նիդերլանդներում:

բ) Երբ, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատված է հարկումից, ապա Հայաստանը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

(Կենսաթոշակներ, տարեկան ռենտա և սոցիալական ապահովագրության վճարներ) 3-րդ կետի, 19-րդ հոդվածի (Պետական ծառայություն) 1-ին կետի «ա» ենթակետի և 2-րդ կետի «ա» ենթակետի, 22-րդ հոդվածի (Այլ եկամուտներ) 2-րդ կետի համաձայն կարող են հարկվել Հայաստանում և ներառված են 1-ին կետում հիշատակված բազայում, ապա Նիդերլանդները կազատեն այդպիսի եկամտի կամ գույքի տարրերը՝ թույլատրելով հարկի նվազեցում: Այդպիսի նվազեցումը պետք է հաշվարկվի կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ Նիդերլանդների օրենքների դրույթներին համապատասխան: Այդ նպատակով նշված եկամտի կամ գույքի տարրերը պետք է ներառվեն եկամտի այն ընդհանուր գումարի մեջ, որն ազատվում է նիդերլանդական հարկից այդ դրույթների շրջանակներում:

3. Բացի այդ, Նիդերլանդները կթույլատրեն նվազեցում այդպիսով հաշվարկված նիդերլանդական հարկից եկամտի կամ գույքի այն տարրերի նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի (Շահաբաժիններ) 2-րդ կետի «բ» ենթակետի, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 2-րդ կետի, 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 2-րդ կետի, 13-րդ հոդվածի (Գույքի արժեքի հավելած) 5-րդ կետի, 16-րդ հոդվածի (Տնօրենների հոնորարներ), 17-րդ հոդվածի (Արտիստներ և մարզիկներ), 18-րդ հոդվածի (Կենսաթոշակներ, տարեկան ռենտա և սոցիալական ապահովագրության վճարներ) 2-րդ կետի և 23-րդ հոդվածի (Գույք) 1-ին և 2-րդ կետերի համաձայն կարող են հարկվել Հայաստանում այն չափով, որքանով այդ տարրերը ներառված են 1-ին կետում հիշատակված բազայի մեջ: Այդպիսի նվազեցման գումարը պետք է հավասար լինի այդ եկամտի կամ գույքի տարրերի նկատմամբ Հայաստանում վճարված հարկին, բայց չպետք է գերազանցի նվազեցված գումարի այն չափը, որը կթույլատրվեր, եթե այդպիսով ներառված եկամտի կամ գույքի տարրերը լինեին եկամտի կամ գույքի միակ տարրերը, որոնք ազատված են նիդերլանդական հարկից կրկնակի հարկումը բացառելու նպատակով՝ Նիդերլանդների ներքին օրենսդրության դրույթների շրջանակներում:

4. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ Նիդերլանդները կթույլատրեն նվազեցում նիդերլանդական հարկից Հայաստանում վճարված այն եկամտի տարրերի նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից), 10-րդ հոդվածի (Շահաբաժիններ) 6-րդ կետի, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 6-րդ կետի, 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 5-րդ կետի, 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) և 22-րդ հոդվածի

յուրաքանչյուր ձեռնարկության համար դիտարկվում է գործունեության իրականացման 12 ամսվա ընթացքում 30 օրը գերազանցող ժամանակահատվածը,

բ) ձեռնարկությունը համարվում է զուգորդված այլ ձեռնարկության հետ այն դեպքում, երբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է այդ մյուս ձեռնարկության գույքի առնվազն մեկ երրորդը, կամ երբ անձը ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է երկու ձեռնարկությունների գույքի առնվազն մեկ երրորդը:

4. Սակայն, սույն հոդվածի 3-րդ կետի նպատակներով, «օֆշորային գործունեություն» տերմինը չի ներառում.

ա) 5-րդ հոդվածի (Մշտական հաստատություն) 4-րդ կետում նշված ցանկացած գործունեություն կամ գործունեությունների համակցություն,

բ) բուքսինգի և խարսխային աշխատանքների իրականացման նպատակներով նախատեսված նավերի և այդ նավերի կողմից իրականացվող որևէ այլ աշխատանք,

գ) միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի միջոցով մատակարարումներ կամ անձնակազմի փոխադրում:

5. Պայմանավորվող Պետության այն ռեզիդենտը, որը մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացնում է այնպիսի օֆշորային գործունեություն, որը բաղկացած է մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից, համարվում է մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով այդպիսի գործունեություն իրականացնող, եթե դիտարկվող օֆշորային գործունեությունը գերազանցում է երեսնօրյա ժամանակահատվածը:

6. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատության միջոցով վարձու աշխատանքի դիմաց ստացած ռոճիկը, աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում այդ մյուս Պետությունում օֆշորային գոտում իրականացված գործունեության չափով:

7. Երբ ներկայացվում է փաստացի ապացույց Հայաստանում վճարված հարկի այն եկամտի տարրերի նկատմամբ, որոնք կարող են հարկվել Հայաստանում 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) և 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) 3-րդ և 5-րդ կետերի և

Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի հաստատուն բազային պատկանող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով կամ օդանավերով ներկայացված գույքը և այդպիսի նավերի և օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա են հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի ղեկավարման վայրը: Սույն կետի նպատակներով կիրառվում են 8-րդ հոդվածի (Շովային և օդային փոխադրում) 2-րդ կետի դրույթները:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Գ Լ ՈՒ Խ 5

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՅԱՌՈՒՄ

Հոդված 24

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՅԱՌՈՒՄ

1. Նիդերլանդներն իրենց ռեզիդենտներին հարկելիս կարող են ներառել հարկվող բազայի մեջ եկամտի կամ գույքի այն տարրերը, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Հայաստանում:

2. Այնուամենայնիվ, երբ Նիդերլանդների ռեզիդենտը եկամտի տարրեր է ստանում կամ տնօրինում է գույքի տարրեր, որոնք սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի (Եկամտուտ անշարժ գույքից), 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից), 10-րդ հոդվածի (Շահաբաժիններ) 6-րդ կետի, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 6-րդ կետի, 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 5-րդ կետի, 13-րդ հոդվածի (Գույքի արժեքի հավելած) 1-ին և 2-րդ կետերի, 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) 1-ին կետի, 15-րդ հոդվածի (Կախյալ անձնական ծառայություններ) 1-ին կետի, 18-րդ հոդվածի

Գ Լ ՈՒ Խ 6
ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25

ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են անկախ սույն Կոնվենցիայի այլ դրույթներից: Սակայն սույն հոդվածը չի կիրառվի այն դեպքում, երբ անձի օֆշորային գործունեությունը կազմում է մշտական հաստատություն, 5-րդ հոդվածի (Մշտական հաստատություն) դրույթներին համապատասխան, կամ հաստատուն բազա՝ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթներին համապատասխան:

2. Սույն հոդվածում «օֆշորային գործունեություն» տերմինը նշանակում է՝ գործունեություն, որն իրականացվում է օֆշորային գոտում Պայմանավորվող Պետությունում գտնվող ծովային հատակի և նրա ստորին շերտի բնական պաշարների արդյունահանման կամ շահագործման կապակցությամբ:

3. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը, որը օֆշորային գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, կարող է, սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան, դիտարկվել որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով (եթե դիտարկվող օֆշորային գործունեությունը չի իրականացվում այդ մյուս Պետությունում) ցանկացած 12 ամսվա ընթացքում ընդհանուր առմամբ 30 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում:

Սույն կետի նպատակներով՝

ա) եթե մյուս Պայմանավորվող Պետությունում օֆշորային գործունեություն իրականացնող ձեռնարկությունը զուգորդված է այլ ձեռնարկության հետ, և այդ ձեռնարկությունը, որպես նույն նախագծի մաս, շարունակում է առաջինը հիաշատակված ձեռնարկության կողմից իրականացվող կամ իրականացված համանման օֆշորային գործունեությունը, և վերը նշված գործունեությունը, որն իրականացվում է միաժամանակ երկու ձեռնարկությունների կողմից (և միասին վերցված) գերազանցում է երեսուրյա ժամանակահատվածը, ապա

կետի կամ 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 7-րդ կետի դրույթները, Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարած տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող Պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չեն ենթարկվի առաջինը հիշատակված Պետությունում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն է կամ դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթակվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի կամ նրա համար՝ մյուս Պայմանավորվող Պետությունում հարկային նպատակներով հաշվարկված կենսաթոշակային կազմակերպությանը կատարված մուծումները հարկային նպատակներով կդիտարկվեն նույն կերպ առաջինը հիշատակված Պետությունում, ինչպես որ այդ առաջինը հիշատակված Պետությունում հարկային նպատակներով հաշվարկված կենսաթոշակային կազմակերպությանը կատարված մուծումները՝ պայմանով, որ.

ա) այդպիսի ֆիզիկական անձը մուծումներ է կատարել այդ կենսաթոշակային ծրագրին մինչև առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտ դառնալը, և

բ) առաջինը հիշատակված Պետության իրավասու մարմինն ընդունում է, որ կենսաթոշակային ծրագիրը համապատասխանում է այդ Պետությունում հարկման նպատակների համար ճանաչված կենսաթոշակային ծրագրին:

սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն, ապա Նիդերլանդները կթույլատրեն իրենց հարկի նվազեցում, որը կհաշվարկվի 24-րդ հոդվածի (Կրկնակի հարկման բացառում) 2-րդ կետի կանոնների համապատասխան:

Հոդված 26

ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող Պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան միևնույն հանգամանքների դեպքում հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում կամ կարող են ենթարկվել մյուս Պետության քաղաքացիները: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան) դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող Պետություններից և ոչ մեկում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ Պետության քաղաքացիները միևնույն հանգամանքների դեպքում:

3. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին հարկման նպատակներով այնպիսի անձնական գեղջերի, նվազեցումների և պակասեցումների թույլատրումը պարտավորեցնող դրույթ, որոնք Պայմանավորվող Պետությունը շնորհել է իր ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի (Չուգորդված ձեռնարկություններ) 1-ին կետի, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 8-րդ

Սույն կետի նպատակների համար «կենսաթոշակային ծրագիր» հասկացությունը ներառում է հասարակական ապահովագրական համակարգի շրջանակներում ստեղծված կենսաթոշակային ծրագիրը:

7. Չնայած 2-րդ հոդվածի (Ընդգրկված հարկեր) դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

Հոդված 27

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի (Անխտրականություն) 1-ին կետին, այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե նա ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը քացառելու նպատակով: Չեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է իրականացվի անկախ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրություններում առկա որևէ ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև

խորհրդակցել միմյանց հետ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

5. Եթե 1-ից 4-րդ կետերի ընթացակարգերից հետո սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ծագած տարաձայնությունները Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները առանձին դեպքերում չկարողանան լուծել փոխադարձ համաձայնությամբ, ապա գործը կարող է, երկու իրավասու մարմինների համաձայնությամբ, վերանայվել միջազգային իրավասու մարմինների կողմից ստեղծված և անկախ անձանցից կազմված արբիտրաժային մարմնի միջոցով՝ միջազգայնորեն ընդունված արբիտրաժային նորմերի համաձայն: Այդպիսի ընթացակարգերը երկու Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինների միջև կհաստատվեն փոխադարձ համաձայնությամբ: Արբիտրաժային մարմնի որոշումները պարտադիր են երկու Պայմանավորվող Պետությունների, ինչպես նաև այդ գործում ներգրավված հարկատուի կամ հարկատուների համար:

Սույն կետը կկիրառվի միայն երկու Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինների կողմից հաստատված՝ վերը նշված ընթացակարգերից հետո:

Հոդված 28

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայում ընգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով դրանցից առաջացած հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան): Պայմանավորվող Պետության ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում

օգտվում որևէ նախապատվությունից Հայցվող Պետությունում և չեն կարող բավարարվել բանտարկությանը պարտապանի պարտքի պատճառով: Հայցվող Պետությունը պարտավորված չէ ձեռնարկել որևէ գործնական միջոցառում, որը սահմանված է Հայցվող Պետության օրենսդրությամբ:

3. Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի կողմից գանձված գումարները, սույն հոդվածի համաձայն, կփոխանցվեն մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին գանձման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

4. 2-րդ կետի դրույթները կիրառվում են միայն այն հարկային հայցերի նկատմամբ, որոնք ներկայացված են Հայցվող Պետությունում դրանց գանձումը թույլատրող փաստաթղթի միջոցով և, եթե իրավասու մարմինները այլ կերպ չեն համաձայնվել, բողոքարկված չեն:

Սակայն երբ հայցը վերաբերում է Հայցվող Պետության ռեզիդենտ չհանդիսացող անձին, 2-րդ կետի դրույթները կիրառվում են միայն այն դեպքում, եթե իրավասու մարմինները այլ կերպ չեն համաձայնվել, երբ հայցի վիճարկումը չի կարող այլևս երկարաձգվել:

5. Հայցվող Պետությունը պարտավորված չէ արձագանքել հայցին.

ա) եթե Հայցվող Պետությունը չի ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները իր տարածքում, բացառությամբ երբ այդպիսի միջոցներին դիմելը կարող է առաջացնել անհամեմատելի դժվարություններ,

բ) եթե հարկի հայցը հակասում է սույն Կոնվենցիային կամ որևէ այլ համաձայնագրի, որի կողմեր են հանդիսանում երկու Պետությունները:

6. Հարկային հայցի բավարարման վարչական օժանդակության պահանջը պետք է ուղեկցվի.

ա) սույն Կոնվենցիայում ընդգրկված հարկային գանձումների համապատասխանությունը հարկային հայցին հաստատող և 4-րդ կետի պայմանների բավարարությունը հաստատող հայտարարագրով,

բ) Հայցվող Պետությունում գանձումը թույլատրող փաստաթղթի պաշտոնական պատճենով,

գ) գանձման համար պահանջվող ցանկացած այլ փաստաթղթով,

դ) անհրաժեշտության դեպքում՝ գործին վերաբերող վարչական մարմնի կամ դատարանի որոշման փաստաթղթի պաշտոնական պատճենով:

7. Հայցվող Պետության պահանջով Հայցվող Պետությունը հավաքական միջոցառումներ է ձեռնարկում հարկի գումարի գանձման համար (եթե անգամ

ստացված տեղեկությունը, և կարող է հայտնվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Կոնվենցիայում ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

Իրավասու մարմինները փոխհամաձայնությամբ կմշակեն համապատասխան պայմաններ, մեթոդներ և մեխանիզմներ տեղեկության այդպիսի փոխանակման առնչությամբ:

2. Պայմանավորվող Պետությունները կարող են այդպիսի տեղեկատվություն տրամադրել 27-րդ հոդվածի 5-րդ կետի պայմանների համաձայն ստեղծված արբիտրաժային մարմնին, որոնք անհրաժեշտ են արբիտրաժային գործընթացների իրականացման համար: Տեղեկության նման տրամադրումը ենթարկվում է 30-րդ հոդվածի պայմաններին: Արբիտրաժային մարմնի անդամները, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, պետք է ենթարկվեն տեղեկության հրապարակման սահմանափակումներին:

Հոդված 29

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները պարտավորվում են միմյանց օգնել և աջակցել սույն Կոնվենցիայում ընդգրկված հարկերի, ներառյալ այդպիսի հարկերի հետ կապված տոկոսների, ուշացած վճարումների համար հաշվարկված տույժերի և տուգանքների գանձման գործում:

2. Հայցվոր Պետության պահանջով Հայցվող Պետությունը իրականացնում է առաջինը հիշատակված Պետության հարկային հայցերի գանձումը այնպես, ինչպես որ կվարվեր, համաձայն իր օրենսդրության և վարչական պրակտիկայի, իր սեփական հարկային հայցերի դեպքում: Սակայն այդպիսի հայցերը չեն

հայցը բողոքարկվել է, կամ գանձումը թույլատրող փաստաթուղթը դեռ չի ներկայացվել) այն չափով, որքանով դա թույլատրվում է անել Հայցվող Պետության օրենսդրությամբ և վարչական պրակտիկայով:

8. Այն ժամանակահատվածը, որից հետո հարկային հայցը կորցնում է ուժը, սահմանվում է Հայցվող Պետության օրենսդրությամբ: Գանձման օժանդակության պահանջը պետք է ուղեկցվի այդպիսի ժամանակահատվածի հետ կապված յուրահատկություններով:

9. Օժանդակության նպատակով Հայցվող Պետության կողմից իրականացրած գանձման գործողությունները, որոնք, այդ Պետության օրենսդրության համաձայն, դադարեցնում կամ ընդհատում են 8-րդ կետում նշված ժամկետները, պետք է ունենան նույն ուժը նաև Հայցվող Պետության օրենսդրությամբ: Հայցվող Պետությունը պետք է տեղեկացնի Հայցվող Պետությանը այդպիսի գործողությունների վերաբերյալ:

10. Հայցվող Պետությունը կարող է համաձայնվել վճարման հետաձգման կամ աստիճանաբար վճարման հետ, նախապես տեղեկացնելով Հայցվող Պետությանը, եթե Հայցվող Պետության ներքին օրենսդրությունը կամ վարչական պրակտիկան թույլ են տալիս վարվել այդ կերպ համանման պարագաներում:

11. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները օժանդակության պահանջին ենթակա հարկային հայցի նվազագույն գումարի որոշման կանոնները սահմանում են ընդհանուր համաձայնությամբ:

12. Սույն հոդվածը ոչ մի դեպքում չի կարող պարտավորեցնել որևէ Պայմանավորվող Պետության՝ կիրառելու իր սեփական հարկերի գանձման գործում օգտագործվող վարչական միջոցներից դուրս կամ իր պետական քաղաքականությանը (հասարակարգին) հակասող որևէ այլ միջոցառում:

Հոդված 30

28-ՐԴ ԵՎ 29-ՐԴ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

28-րդ (Տեղեկության փոխանակում) և 29-րդ (Աջակցություն գանձման գործում) հոդվածների դրույթները ոչ մի դեպքում չեն պարտավորեցնում Պայմանավորվող Պետությանը.

ա) վարելու իր կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական գործավարության միջոցառումներ,

բ) պահանջելու տեղեկություն, որը հասանելի չէ իր կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը կարող է բացահայտել որևէ առևտրային, աշխատանքային, արդյունաբերական, մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակարգին):

Հոդված 31

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնություններին:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար մի Պայմանավորվող Պետության՝ մյուս Պայմանավորվող Պետությունում կամ երրորդ Պետությունում գտնվող դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի անդամ հանդիսացող ֆիզիկական անձը, որը հավատարմագրող Պետության քաղաքացին է, կհամարվի հավատարմագրող Պետության ռեզիդենտ, եթե նա կրում է այդ Պետությունում եկամտի և գույքի հարկերի նկատմամբ նույն պարտավորությունները, ինչպես որ այդ Պետության ռեզիդենտները:

3. Սույն Կոնվենցիան չի կիրառվի միջազգային կազմակերպությունների, նրանց մարմինների և պաշտոնյաների և երրորդ Պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկների անդամների նկատմամբ, որոնք գտնվում են Պայմանավորվող Պետությունում, եթե նրանք չեն

կրում այնտեղ եկամտի կամ գույքի հարկերի նկատմամբ նույն պարտավորությունները, ինչպես որ այդ Պետության ռեզիդենտները:

Գ Լ ՈՒ Խ 7

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 32

ՈՒԺԻ ՄԵՉ ՄՏՆԵԼԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի յուրաքանչյուր Պետության ներքին օրենսդրությամբ ուժի մեջ մտնելու համար սահմանված ընթացակարգի պահանջները բավարարելու մասին երկու Պետությունների վերջին գրավոր ծանուցման օրվանից 30 օր հետո, և Կոնվենցիայի դրույթները կգործեն հարկման ենթակա տարիների և հունվարի մեկին կամ հունվարի մեկից սկսվող ժամանակահատվածների համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա համար:

Հոդված 33

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև որևէ Պայմանավորվող Պետության կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան առնվազն օրացուցային տարվա ավարտից վեց ամիս առաջ: Այդ դեպքում Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը դադարեցման մասին ծանուցագրի ստացման օրացուցային տարվա ավարտից հետո սկսվող հարկային տարիների և ժամանակահատվածների համար:


Ի վկայություն վերոնշյալի՝ պատշաճ կերպով լիազորված
ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է ք. Երևանում 2001 թվականի *հոկտեմբերի*.. «31»-ին բնօրինակով,
յուրաքանչյուրը՝ հայերեն, հուլանդերեն և անգլերեն լեզուներով, երեք տեքստերը
լիովին հավասարազոր են: Հայերեն և հուլանդերեն տեքստերի մեկնաբանման
ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՈՒՆԻՑ՝



ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝



Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության և Նիդերլանդների Թագավորության միջև Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին Կոնվենցիայի ստորագրման պահին ներքոստորագրողները համաձայնության են եկել Կոնվենցիայի անբաժան մասը կազմող հետևյալ դրույթների առնչությամբ.

1. Համաձայնեցված է, որ սույն Կոնվենցիայի համապատասխան հոդվածների կիրառման համար բնական պաշարների արդյունահանման և շահագործման իրավունքները կդիտարկվեն որպես այն Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույք, որին պատկանում է ծովային հատակը և նրա ստորին շերտը, և որ այդ իրավունքները կհամարվեն պատկանող այդ Պետության մշտական հաստատության գույքին: Բացի այդ, պայմանավորված է, որ վերը նշված իրավունքները ներառում են այդպիսի արդյունահանումից կամ շահագործումից առաջացած միջոցների տոկոսների կամ շահաբաժինների իրավունքները:

2. Համաձայնեցված է, որ 3-րդ հոդվածի (Ընդհանուր սահմանումներ) 1-ին կետի «է» ենթակետում, 4-րդ հոդվածի (Ռեզիդենտ) 3-րդ կետում, 8-րդ հոդվածի (Ծովային և օդային փոխադրում) 1-ին կետում, 13-րդ հոդվածի (Գույքի արժեքի հավելած) 3-րդ կետում և 23-րդ հոդվածի (Գույք) 3-րդ կետում «փաստացի ղեկավարման վայր» սահմանելիս, ի միջի այլոց, հաշվի են առնվելու հետևյալ պարագաները. ընկերության փաստացի ղեկավարման և կառավարման վայրը, ընկերության համար ստրատեգիական նշանակություն ունեցող որոշումների ընդունման վայրը, ընկերության տնտեսական կամ ֆունկցիոնալ տեսանկյուններից որոշիչ դեր ունեցող ղեկավարման վայրը և առավել կարևոր հաշվապահական փաստաթղթերի պահպանման վայրը:

3. Համաձայնեցված է, որ «միջազգային փոխադրումներում նավերի և օդանավերի շահագործում» արտահայտությունը սույն Կոնվենցիայում օգտագործելիս ներառում է նաև այդպիսի միջազգային փոխադրումներ իրականացնող ձեռնարկության գործունեության հետ ուղղակիորեն կապված ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներով իրականացվող լրացուցիչ փոխադրումները:

4. 1-ին և 4-րդ հոդվածների առնչությամբ.

Համաձայնեցված է, որ սույն Կոնվենցիայի նպատակներով Պայմանավորվող Պետությունը, նրա քաղաքական ստորաբաժանումները կամ տեղական իշխանությունները, այդ Պետության քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության գործնական մարմինները, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդը, որը ճանաչված է որպես այդպիսին Պայմանավորվող Պետությունում, և որի եկամուտը ընդհանուր առմամբ ազատված է հարկումից այդ Պետությունում, համարվում են այդ Պետության ռեզիդենտներ: Ցանկացած կենսաթոշակային ֆոնդ կհամարվի ճանաչված որպես այդպիսին, եթե ստեղծվել է և վերահսկվում է օրենքով սահմանված դրույթների համաձայն:

5. 2-րդ հոդվածի առնչությամբ.

Հայաստանի դեպքում «քաղաքական ստորաբաժանում» արտահայտությունը կունենա «վարչատարածքային ստորաբաժանման» իմաստ:

6. 5-րդ հոդվածի առնչությամբ.

4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի նպատակներով պայմանավորված է, որ «առաքում» տերմինը նշանակում է միմիայն ապրանքների փոխանցում, իսկ 4-րդ կետի «գ» և «է» ենթակետերի նպատակներով պայմանավորված, որ փոխառություն, ապրանքների կամ արտադրանքի առաքում կամ տեխնիկական ծառայություններ պարունակող պայմանագրերի կնքման գուտ նախապատրաստումը (ներառյալ գուտ ստորագրումը) կդիտարկվի որպես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի գործունեություն:

7. 7-րդ հոդվածի առնչությամբ.

7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) 1-ին և 2-րդ կետերի նկատմամբ, այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ապրանքներ կամ արտադրանք է վաճառում կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, այդ մշտական հաստատության շահույթը կորոշվի ոչ թե ձեռնարկության կողմից ստացված ընդհանուր գումարի հիման վրա, այլ ձեռնարկության եկամտի այն մասի հիման վրա, որը հաշվեգրելի է այդ մշտական հաստատության իրական գործունեությանը այդպիսի վաճառքի կամ գործունեության դիմաց: Հատկապես արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների կամ տարածքների հետազոտման, մատակարարման, տեղակայման կամ կառուցման

պայմանագրերի դեպքում կամ հասարակական բնույթի շինարարական աշխատանքների դեպքում, երբ ձեռնարկությունը ունի մշտական հաստատություն, այդպիսի մշտական հաստատությանը վերագրվելիք շահույթը կորոշվի ոչ թե պայմանագրի ընդհանուր գումարի հիման վրա, այլ պայմանագրի այն մասի հիման վրա, որը գործնականում իրականացվում է այն Պայմանավորվող Պետության մշտական հաստատության կողմից, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը: Չեռնարկության գլխավոր գրասենյակի կողմից իրականացվող պայմանագրի այդ մասին վերաբերող շահույթը ենթակա է հարկման այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում այդ ձեռնարկությունը:

8. 7-րդ, 14-րդ և 26-րդ հոդվածների առնչությամբ.

Համաձայնեցված է, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից ղեկավարվող ձեռնարկության կողմից (որի գույքն ամբողջությամբ կամ մասնակիորեն տնօրինում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտը) վճարվող տոկոսները, ռոճիկը և աշխատավարձը տվյալ ձեռնարկության հարկման ենթակա շահույթը հաշվարկելիս ենթակա են նվազեցման նույն պայմաններով, որոնք կիրառվում են, երբ այդպիսի տոկոսները, ռոճիկը և աշխատավարձը վճարվում են առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից, որի գույքն ամբողջությամբ կամ մասնակիորեն տնօրինվում է այդ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտի կողմից:

Համապատասխանաբար, Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ձեռնարկության մշտական հաստատությանը կամ Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող հաստատուն բազային վերագրվող տոկոսները, ռոճիկը և աշխատավարձը այդ մշտական հաստատության շահույթը կամ այդ հաստատուն բազայի եկամուտը հաշվարկելիս ենթակա են նվազեցման նույն պայմաններով, որոնք կիրառվում են, երբ այդպիսի տոկոսները, ռոճիկը և աշխատավարձը վճարվում են առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտի կողմից:

9. 7-րդ և 14-րդ հոդվածների առնչությամբ.

Տեխնիկական ծառայության, ներառյալ գիտական դիտարկումների և դասավանդման, երկրաբանական կամ տեխնիկական բնույթի ուսումնասիրությունների կամ հետազոտությունների կամ խորհրդատվական կամ վերահսկիչ ծառայությունների դիմաց ստացված վճարումները կհամարվեն վճարումներ, որոնց նկատմամբ կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

10. 9-րդ հոդվածի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ զուգորդված ձեռնարկությունների միջև ձեռք բերված համաձայնությունները, ինչպիսիք են գների բաշխման կամ ընդհանուր ծառայությունների համաձայնությունները՝ հիմնված կատարողական, ընդհանուր կառավարչական, տեխնիկական կամ առևտրային ծախսերի, հետազոտման կամ զարգացման ծախսերի կամ այլ համանման ծախսերի վրա, ինքնըստինքյան չեն բերում 9-րդ հոդվածի (Չուգորդված ձեռնարկություններ) 1-ին կետին համապատասխանող պայմանների:

11. 10-րդ հոդվածի առնչությամբ.

1. Չնայած 10-րդ հոդվածի (Շահաբաժիններ) 2-րդ կետի «ա» ենթակետի դրույթներին՝ այդ ենթակետում սահմանված աղբյուրի մոտ պահվող հարկի դրույքաչափը կիջեցվի մինչև 0% այն դեպքում, երբ շահույթը, որից վճարվում են շահաբաժինները, հարկվում է շահութահարկով սահմանված դրույքաչափով, և այդպիսի շահաբաժիններն ստացող ընկերության «ձեռքում» այդ շահաբաժինները ազատված են հարկումից:

2. Համաձայնեցված է, որ Նիդերլանդների դեպքում շահաբաժիններ տերմինը ներառում է նաև շահույթ բաշխող պարտատոմսերից ստացված եկամուտը:

12. 10-րդ հոդվածի առնչությամբ.

1. Համաձայնեցված է, որ, չնայած սույն Արձանագրության 11-րդ հոդվածին, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետում նշված շահաբաժիններին համապատասխան, որոնք վճարվում են Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը, եթե, մյուս Պայմանավորվող Պետության գործող օրենքի համաձայն, այդ մյուս Պայմանավորվող Պետության անհատին վճարվող այդպիսի շահաբաժինների

հարկման արդյունքում հարկային բեռը ավելի ցածր է, քան առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում շահաբաժինների վրա դրվող հարկային բեռը, ապա առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունը կարող է հարկը գանձել այնպիսի դրույքաչափով, որը մյուս Պայմանավորվող Պետության կողմից վերաբաշխված շահաբաժինների վրա սահմանված հարկի դրույքաչափի հետ միասին չի գերազանցում շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը: Այսպիսի հարկը կգանձվի Նիդերլանդների կողմից իրականացված գնահատման արդյունքի հիման վրա՝ այն ընկերության նկատմամբ, որը ստանում է վերը հիշատակված շահաբաժինները:

2. Այնուամենայնիվ, պայմանավորված է, որ վերը նշված 1-ին կետի պայմանները չեն կիրառվում, եթե շահաբաժինները վճարվում են Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից, և շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունն է, և տեղի է ունենում հետևյալ պայմաններից որևէ մեկը.

- ա) շահաբաժիններ ստացող ընկերության գույքը բացառապես տնօրինվում է մյուս Պայմանավորվող Պետության կառավարության, քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից, կամ
- բ) այդպիսի ընկերությունների բաժնետոմսերը պարբերաբար վաճառվում են մյուս Պայմանավորվող Պետության բորսայում, կամ
- գ) շահաբաժիններ ստացող ընկերությունը մյուս Պայմանավորվող Պետությունում զբաղվում է ակտիվ առևտրով կամ ձեռներեցությամբ:

3. Այն դեպքում, երբ ընկերությունը չի իրականացնում վերը նշված 2-րդ կետում թվարկված դրույթները, ապա 1-ին կետի պայմանները չեն կիրառվի այնպիսի ընկերության նկատմամբ, եթե այն ստեղծվել է Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ, Կոնվենցիայի 27-րդ հոդվածին համապատասխան, և եթե այդ ընկերությունը մյուս Պայմանավորվող Պետությունում չի ստեղծվել կամ պահվել գլխավորապես Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի կամ սույն Արձանագրության 12-րդ հոդվածի շահույթի ապահովման նպատակով և պահանջում է, որ շահաբաժիններ ստացող ընկերությունը հանդիսանա մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ և շահաբաժինների փաստացի սեփականատեր:

13. 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների առնչությամբ.

Այն դեպքում, երբ աղբյուրի մոտ սահմանված հարկի գումարը կգերազանցի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ հոդվածների դրույթներով սահմանված հարկի գումարին, հարկը սահմանող Պետության իրավասու մարմնին կներկայացվի հարկի գերազանցած գումարի վերադարձման ծանուցագիր՝ գանձված հարկի օրացուցային տարվան հաջորդող երեք տարվա ընթացքում:

14. 10-րդ և 13-րդ հոդվածների առնչությամբ.

Պայմանավորված է, որ Նիդերլանդների դեպքում ընկերության լուծարումից (մասնակի) կամ ընկերության կողմից սեփական բաժնետոմսերի գնումից ստացված եկամուտը դիտարկվում է որպես բաժնետոմսերից ստացված եկամուտ, այլ ոչ որպես գույքի արժեքի հավելած:

15. 16-րդ հոդվածի առնչությամբ.

1. Համաձայնեցված է, որ «տնօրենների խորհրդի անդամ» արտահայտությունը նշանակում է.

ա) Հայաստանի դեպքում՝ ցանկացած մարմնի անդամ, որի գործունեությունը կամ պարտավորությունները համանման են տնօրենների խորհրդի գործունեությանը կամ պարտավորություններին,

բ) Նիդերլանդների դեպքում՝ "bestuurder" կամ "commissaris":

2. Համաձայնեցված է նաև, որ նիդերլանդական ընկերության "bestuurder" կամ "commissaris" նշանակում են՝ անձինք, որոնք ընտրված են որպես այդպիսին բաժնետերերի ընդհանուր ժողովում կամ այդպիսի ընկերության որևէ այլ իրավասու մարմնի կողմից և լիազորված են վարելու, համապատասխանաբար, ընկերության ընդհանուր ղեկավարումը կամ վերահսկումը:

16. 24-րդ հոդվածի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ 24-րդ հոդվածի (Կրկնակի հարկման բացառում) 3-րդ կետում նշված նվազեցման հաշվարկման համար, 23-րդ հոդվածի (Գույք) 1-ին կետում հիշատակված գույքի տարրերը պետք է ընդգրկվեն արժեքում, որից նվազեցվում է պարտքերի գումարը՝ ապահովված այդ գույքի դիմաց գրավով, և 23-րդ հոդվածի (Գույք) 2-րդ կետում հիշատակված գույքի տարրերը պետք է

ընդգրկվեն արժեքում, որից նվազեցվում է մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային պատկանող պարտքերի գումարը:

Ի վկայումն վերոնշյալի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարվել է ք.Երևանի 2001 թվականի *Հ.Սկզբ.Սկզբ.* «31»-ին բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հուլանդերեն և անգլերեն լեզուներով, երեք տեքստերը լիովին հավասարազոր են: Հայերեն և հուլանդերեն տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՈՒՆԻՑ՝



ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝

